Հավելված
ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թ.
դեկտեմբերի 10-ի N 422 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՏԻՐԱՄԱՅՐ ՆԱՐԵԿ» ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ ԱՐԵԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ՋԵՐՄԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքի «Տիրամայր Նարեկ» հիվանդանոցի ջեռուցման համակարգն ապահովել այլընտրանքային արևային էներգիայով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերարներ (իրավաբանական և ֆիզիկական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական 3-րդ մասնաշենք, ՀՎՀՀ՝ 02507456
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Աշոցքի համայնք, առողջապահության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 16,928,960.00 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի Աշոցք քաղաքի համայնքը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2018 թվականի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում կառուցել և տեղադրել արևային ֆոտովոլտային «ՕՆ ԳՐԻԴ» ջերմային կայանը: Արժեքը՝ 16,928,960.00 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային «ՕՆ ԳՐԻԴ» (ON GRID) ջերմակայանի կառուցում և տեղադրում՝ 16,928,960.00 դրամ, առանց ԱԱՀ-ի
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ